ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
E-mail: hcav@hcav.am

Ե/2017- 22.03/292

22.03.2017 թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Հարություն Սարգսյանին

Հարգելի պարոն մարզպետ

2015 թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2016 թվականի միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը: Ժամանակացույցում ներառված որոշ միջոցառումների կատարող են նշված մարզպետարանները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն ծրագրի կատարումն ապահովող հետևյալ միջոցառումների իրականացման մասին՝

6. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխարգելման արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկություններ ներկայացնելը /2016 թվական/

- Արդյո՞ք թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխարգելման արդյունավետության բարձրացման ուղղությամբ ներկայացվել են առաջարկություններ, եթե այո՝ ում են ներկայացվել առաջարկությունները և ինչ արդյունքներ են գրանցվել *(առկայության դեպքում խնդրում եմ տրամադրել առաջարկությունների փաթեթը)*

13.1 Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածումը դադարեցրած անձանց վերականգնողական աշխատանքներ իրականացնող ծառայությունների կարիքների ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում

- Արդյո՞ք ուսումնասիրվել է թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածումը դադարեցրած անձանց վերականգնողական աշխատանքներ իրականացնող ծառայությունների կարիքները *(առկայության դեպքում խնդրում եմ տրամադրել ուսումնասիրության արդյունքները)*
- Արդյո՞ք ներկայացվել են առաջարկություններ ուսումնասիրության արդյունքների հիման վրա, եթե այո՝ ում և ինչ առաջարկություններ են ներկայացվել և ինչ արդյունքներ են գրանցվել *(խնդրում եմ առկայության դեպքում տրամադրել առաջարկությունների փաթեթը)*

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտքագրման թիվ 1748
29 03 2017թ.

եթե այո՝ քանի անգամ, որտեղ, ինչ միջոցառումներ, ում կողմից են անցկացվել և որքան է եղել մասնակիցների թիվը

17.2 Ֆիզիկական պատրաստականության, առողջարարական և մարզական զանգվածային քարոզչություն՝ տպագիր, էլեկտրոնային և զանգվածային լրատվական միջոցներով

- Արդյո՞ք իրականացվել է ֆիզիկական պատրաստականության, առողջարարական և մարզական զանգվածային քարոզչություն, եթե այո՝ զանգվածային լրատվության որ միջոցներով, քանի հաղորդման, հրապարակման միջոցով կամ քարոզչության այլ ձևով *(խնդրում եմ տրամադրել համապատասխան հաղորդաշարերի, հրապարակումների հղումները/օրինակները)*

18. Ըստ բնակության վայրերի պարզ տիպի խաղահրապարակների ստեղծում /2016 թվական/

- 2016 թվականի ընթացքում արդյո՞ք ստեղծվել են պարզ տիպի խաղահրապարակներ, եթե այո՝ քանի խաղահրապարակ է ստեղծվել, որտեղ:

Միաժամանակ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն, թե վերոնշյալ յուրաքանչյուր միջոցառման իրականացման համար 2016 թվականների ընթացքում որքա՞ն ֆինանսական միջոցներ են ծախսվել, ի՞նչ աղբյուրներից (խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել ըստ առանձին միջոցառումների և ֆինանսավորման աղբյուրների):

Խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն նաև այն մասին, թե արդյոք իրականացվել են այլ գործողություններ՝ ուղղված ծրագրի իրականացմանը, եթե այո՝ որ միջոցառումների իրականացմանն են ուղղված եղել և ինչ գործողություններ են իրականացվել:

Հարգանքով՝
կազմակերպության նախագահ Արթուր Սաքունց

Կատ.՝ Մ. Թեմուրյան
mtemuryan@hcav.am
հեռ.՝ 077342268